

Ուշագրություն է դրավում համառոտ կենսագրական ակնարկը, որտեղ վեր են հանված Մեյլի մանկության, պատանեկության, ուսումնառության ու որպես գիտնական ձևավորվելու, դասախոսական աշխատանքի, հայերենին ու հայ մշակույթին հաղորդակից դառնալու, Հայաստան կառարած այցելությունների, հայ մտավորականների հետ ունեցած կապերի, հայ մշակույթի դարգացմանը նպաստելու նրա մտադրությունների ու ձեռնարկումների և նրա արդյունաշատ հայագիտական գործունեության այլ դրվագները:

«Հայագիտական ուսումնասիրությունները» թարգմանելիս ուշադիր պրպտումներ են կատարվել Մոսկվայի, Լենինգրադի, Երևանի գրադարաններում ու արխիվներում, հավաքված նյութը լրացվել է Փարիզից ստացված նյութերով ու տեղեկություններով: Այդուհանդերձ Մեյլի հայագիտական վաստակի կենտրոնացումն ու թարգմանությունը տակավին ավարտված չէ, մնում են հայերենին նվիրված նրա գրքերը և նրա վիթխարի գիտական ժառանգության մեջ ափսված բազմաթիվ այլ հայագիտական նյութեր: Սակայն ուրախալի է, որ արդեն կատարված է առաջին յուրջ, կարևոր ու միևնույն ժամանակ դժվարին բայլը: Թարգմանված, համակարգված ու ծանոթագրված հարուստ նյութը ընթերցողին է ներկայանում որպես ամբողջական և հաջողված գիտական ժողովածու: Հուսանք, որ համալսարանի հայագիտական կենտրոնը ապագայում հայ ընթերցողի գրադարանը կհարստացնի նաև Հ. Հյուրշմանի, Յ. Կարստի, Յ. Մարկվարտի և այլ հեղինակների՝ ժամանակակից հայագիտության համար գիտական ու գործնական կարևորություն ունեցող աշխատությունների հրապարակումներով:

Կարծում ենք, վերևում ասածից հետո, հարկ չկա ծավալվելու ժողովածուի նշանակության շուրջը: այն կարևոր մշակութային երևույթ է, շատ անհրաժեշտ՝ հայագետի, ուսանողի, մտավորականի համար:

Շնորհակալ ժողովածուի անուրանալի արժանիքները, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում անել նաև մի քանի դիտողություններ, որոնք, սակայն, էական նշանակություն չունեն:

Հայտնի է, որ Մեյլի, մասնավորապես հայերենի համեմատական հնչյունաբանությանն ու քերականությանը վերաբերող որոշ դրույթներ դարգացվել, լրացվել և, բնականաբար, մասամբ խմբագրվել ու վերանայվել են պատմահամեմատական լեզվաբանության վերջին տասնամյակների նվաճումներին համապատասխան: Այդ նկատառումով լավ կլիներ, եթե ժողովածուն ունենար ընդարձակ ներածություն՝ Մեյլի հայագիտական ժառանգության ընդհանուր վերլուծությամբ, նրա լեզվաբանական դրույթների ու ըմբռնումների ժամանակակից գիտական մեկնաբանությամբ ու ամփոփումով:

Ժողովածուն ավարտուն տեսք կունենար, եթե ընդգրկեր նաև Մեյլի մյուս հղվածներում առկա հայագիտական մտքերը:

Գիրքը կշահեր, եթե ի թիվս այլ ցանկերի լիներ նաև անձնանունների ցանկ, որը մեծապես կօգներ հետազոտողին:

«Հայագիտական ուսումնասիրություններ» գիտական ժողովածուն, հիրավի, ծանրակշիռ նպաստ է բերում հայագիտության զարգացմանը:

Բանասիր. գիտ. դոկտոր Հ. Մ. ԱՄԵԼՅԱՆ

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱՒՅԱՆ, Հայաստանի վրացերեն արձանագրություններ, Երևան, 1977, 363 էջ, գինը 3 ռ. 65 կ.:

Հայաստանում վրացերեն արձանագրությունների գոյությունը պայմանավորված է հայ և վրաց ժողովուրդների դարավոր հարևանությամբ, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային առնչություններով և այլևայլ գործոններով: Բազմարևույթ այդ արձանագրությունները (չինարարական, նվիրատվական, արտոնագրային, չիշատակարանային և այլն) հարուստ ու հավաստի փաստական նյութ են պարունակում երկու ժողովուրդների պատմության ամենատարբեր կողմերի մասին: Անհնարին է պատկերացնել կովկասագիտությանը հետաքրքրող բազմաթիվ հարցերի սպառիչ կամ նորովի քննությունն առանց այդ արձանագրու-

թյունների վերծանության ու համապատասխան ուսումնասիրության: Դրանով պետք է բացատրել այն հետաքրքրությունը, որ այդ վիժագիր վավերագրերի նկատմամբ ցուցաբերվում է տակավին անցյալ դարի կիսերից:

Հետազոտողներից առաջինը հայագետ Ներսես Սարգիսյանն էր, որը, շրջելով Արևմտյան Հայաստանում, պատճենեց և ակադ. Մ. Բրոսեի վերծանությամբ ու թարգմանությամբ 1864 թ. հրապարակեց շուրջ 25 վրացերեն արձանագրություն: Ն. Սարգիսյանի շնորհակալ ձեռնարկումը հետագայում շարունակեցին ակադ. Ն. Մառը, պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը, ակադ. Ա. Շանիձեն գիտական շրջանառության մեջ դնելով Հայաս-

տանի (նկատի ունենք պատմական Հայաստանը) անարածքում գտնվող բազմաթիվ վրացերեն վիճակագրեր:

Այս երախտավորների գիտական վաստակն ըստ ամենայնի գնահատելով հանդերձ՝ նկատենք, որ նրանք կատարել են գերազանցապես նախնական հրապարակումներ և չեն փորձել լիակատար դիվան լույս ընծայել, հետևաբար Հայաստանի վրացերեն արձանագրությունները սսլասում էին ամբողջական գիտական հրապարակման: Վերջին հանգամանքը հատկապես շեշտելի է, որովհետև արձանագիր հուշարձանների մշտապես ենթակա են հողմնահարվելու, քայքայվելու, ժամանակի ընթացքում իսպառվելու և գիտության համար առհավետ կորչելու վտանգին: Այդ արձանագրությունները հրապարակելու գործն իրականացրել է հայագետ-վրացագետ Պարույր Մուրադյանն իր «Հայաստանի վրացերեն արձանագրությունները» աշխատությամբ: Երբքն ունի ներածություն, առանձին հուշարձանների բնությանը նվիրված ուսումնասիրություն և «Համարաբարձ-բառարան»:

Ներածության մեջ հեղինակը վեր է հանում վիճական բնագրերի, մասնավորապես վրացերեն արձանագրությունների (Անի, Չանգի, Վաղարշապատ, Կոշ, Թեթաուլք, Լեռնանցք, Հենվանք, Շահնաղար, Քուրայր, Հաղբատ-Սանահին, Պղնձահանք, Բարանա-Կողր) դերը կովկասագիտական խնդիրների բնության համար, ըստ ամենայնի գնահատում հայագետ-վրացագետների նախորդ սերնդի վաստակը գիտության այդ ասպարեկում:

Վրաստանի սահմաններից դուրս վրացերեն արձանագրությունների առկայությունը Պ. Մուրադյանը բացատրում է արևելյան քրիստոնեության նշանավոր կենտրոններում վրաց մենաստանների ու գրչության կենտրոնների գոյատևմամբ, մայր երկրից վրաց էթնիկական տարրի տեական բնույթ կրող բուն տեղահամամբ ու այլուր բնակեցմամբ և մշակույթի փոխադարձ տարածմամբ:

Անդրադառնալով Հայաստանում վրացերեն արձանագրությունների առկայության պատճառներին, նա գտնում է, որ դրանք պայմանավորված էին հայ և վրաց ժողովուրդների պատմական մակատարի ու մշակութային ավանդների ընդհանրությամբ, ինչպես նաև հայերենի և վրացերենի փոխտարածումից բխող մատչելիությամբ՝ մասնավորապես XII—XIII դդ., երբ Բագրատունիների վրացական ճյուղի հովանու ներքո հայ-վրացական քաղաքական միավորումն ու երկու ժողովուրդների մշակութային ընդհանրություններն այնպիսի վճռորոշ գործոններ էին, որ օտարները նրանց դիտում էին որ-
17 Հանդես, X 2

պես միասնական երկիր ու ժողովուրդ: Այս առումով խիստ կարևոր է այն եզրահանգումը, որ միջնադարում «հայ» և «վրացի» տերմիններն ունեին դավանաբանական ընկալում: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ Հայաստանի վրացերեն արձանագրությունները թվագրվում են գերազանցապես XI—XIV դդ.:

Բագրատունիների վրացական ճյուղի գերիշխանությամբ XII դարի վերջին, XIII դարի սկզբին Հյուսիսային Հայաստանում Զաքարյան իշխանապետության հաստատումը և այդ ավատական տան ներկայացուցիչների ձևող մասի քաղկեդոնականությանը հարելը, բնականաբար, չէին կարող չխթանել հայ քաղկեդոնականության աշխուժացմանը, հատկապես Հայաստանի՝ Վրաստանին սահմանակից գավառներում, տեղի տալով կամ մի շարք հայ քաղկեդոնական իդեոլոգիաների կենտրոնների առաջացմանը, կամ եղածների աշխուժացմանը: Այս իրողությունից էլ բխում է Պ. Մուրադյանի այս դիտողությունը, որ «Հայաստանում եղած վրացերեն արձանագրությունների նշանակալի մասը հայ քաղկեդոնականների, մասնավորապես վանականության անվան հետ է կապված» (էջ 25): Այսպիսով, դժվար չէ նկատել, որ դրանք մեծ մասամբ վրացերեն ներկայացված հայկական հուշարձաններ են: Հետևաբար առանց դրանց բնության դժվար է հայ քաղկեդոնականության պատմության մասին սպառիչ պատկերացում կազմել: Ընդ որում, հեղինակին չզբաղեցնողը ոչ թե հարցի քրիստոսաբանական կողմն է: այլ, հասկանալի է, պատմական-մշակութային» (էջ 25): Պ. Մուրադյանն այդ վիճակների լեզվական բնությամբ բացահայտում է դրանցում առկա հայկաբանությունները և որոշ նպաստ բերում հայերենի ու վրացերենի պատմության ուսումնասիրությանը:

Նրկարամյա իր պալատումների ընթացքում գրախոսվող աշխատության հեղինակը բազմիցս եղել է մեր հանրապետության՝ վրացերեն վիճակագրեր ունեցու հնավայրերում, տեղում ստուգել հրապարակվածները, հայտնաբերել նորերը, վերծանել, ենթարկել է աղբյուրագիտական պատշաճ բնության: Նրա ուշադրությունից չեն լրիպել ոչ միայն հանրապետությունից դուրս գտնվող արձանագրությունները, այլև արձանագիր քանդառանային առարկաներն ու իրերը: Այդ ճանապարհով գիտությունը հայտնի են դարձել նորանոր արձանագրություններ: Չսահմանափակվելով հրապարակվող նյութերի վերծանում-սրբագրում-թարգմանությամբ, հեղինակը ձեռնամուխ է եղել դրանց և հարակից հայերեն արձանագրությունների ու գրչագիր համապատասխան այլ սկզբնաղբյուրների աղ-

բյուրագիտական ուսումնասիրությանը: Դրա շնորհիվ Հայաստանի և Վրաստանի պատմությանը վերաբերող շատ հարցեր կա՛մ սպառնչքնություն են ենթարկվել, կա՛մ նորոգի լուսաբանվել, կա՛մ միության բողից ձերբազատվել, որով նրանց հետագա ուսումնասիրության համար բարեբեր հող է ստեղծվել, կա՛մ էլ հաստատվել են կովկասագիտության մեջ առաջադրված առանձին կարևոր դրույթներ ու կոահումներ: Այսպես, օրինակ, Վրաց նտիփան կաթողիկոսի Անիի արձանագրության բնութայնից պարզվում է, որ նրան կցված հայերեն տողը նպատակ ունի հաստատել, որ վրացերեն արձանագրությունը պատկանում է կաթողիկոսին և որ «նտիփանի արձանագրությունը փաստորեն առնչություն չունի «ավտոնոմ հայոց քաղաքի» ու նրա «տեղական իշխանություններին» իրավասության հետ» (էջ 45), ինչպիսի հարցադրում ժամանակին կատարել են Ն. Մառը և Հ. Օրբելին:

Հրապարակվող արձանագրությունների մասնագիտական բնութայնը այսօր ճշտված է մի շարք հարտարապետական հուշարձանների (Թեմաուլյքի, Շահնագարի, Քոբայրի, Կուրջանի, Հենվանի և այլն) կառուցման ժամանակը: Նկատենք նաև, որ մատենագրական լրացուցիչ, կովանների տեղին օգտագործմամբ հեղինակին հաջողվել է հասնել բոլոր կարևոր անթվակիր արձանագրությունների թվագրմանը ոչ թե դարի կամ տասնամյակների մոտավոր սահմաններում, այլ մի քանի տարվա, որ չափազանց կարևոր հանգամանք է:

Դնահատանքի է արժանի Պ. Մուրադյանի վաստակը Հայաստանի իշխանական նոր տներին, մասնավորապես Ջաբարյանների տոհմածագի ամբողջացման, ինչպես նաև Կյուրիկյանների ժամանակագրության հետ կապված որոշ մանրամասների ճշգրտման գործում: Սույն աշխատությամբ առաջին անգամ երևան է բերվում XII—XIII դարերում Հայաստանի ու Վրաստանի քաղաքական կյանքում զգալի դեր խաղացած Բուրաջանների տոհմը: Ուշագրավ է հեղինակի կոահումն այն մասին, որ այդ տոհմը սերում է XII դարի երկրորդ կեսի վրաց արքունիքի նշանավոր ղեմերից մեկից՝ հետագայում շնորհապարկված Արուշ-Հասանից: Պ. Մուրադյանը տալիս է նաև Բուրաջանների տոհմաձուր:

«Հայաստանի վրացերեն արձանագրությունները» ուսումնասիրության արժանիքների շարքը պիտի դասել նաև վիճաբերում առկա մի շարք սոցիալական տերմինների բնութայնը, որ կատարել է հեղինակը («նախապատրոն», «շարիատ», «զալա» և այլն):

Սույն աշխատության բերած նորություններից մեկն էլ «Հայաստանի վրացերեն արձանագրու-

թյունների համարարան-բառարանն» է, որը հեղինակի արտահայտությամբ, «այդ բնույթի անդրանիկ փորձն է մեղանում և կովկասագիտության մեջ՝ առհասարակ»:

Մի գրախոսության սահմաններում դժվար է վեր հանել այս աշխատությամբ կովկասագիտության գանձարանը մուծված ողջ ավանդը:

Մի քանի դիտողություններ ու լրացումներ:

Իվանե աթաբեկի Թեմաուլյքի շինարարական արձանագրության մեջ (էջ 119) խոսվում է նախքան Անիի գրավումը Հյուսիսային Հայաստանում սելջուկյան լծից նրա ազատագրած հողերի մասին, հական-հանվանե թվարկվում են դրանց ծայրակետերը. «Հասանք (?) շամքիներին (?)», Կայտուրուկից (?) Գանձա[կ], հենց նորերդից մինչև Կեչառեցիների երկրի միջև...»: Այստեղից կարելի էր եզրակացնել, որ նոր բերդի Կյուրիկյան իշխանությունը վասալական կախման մեջ է գտնվել Իվանե աթաբեկից, մի բան, որը ցարդ հայագիտությանը հայտնի չէր: Այս իրողությունից իր հերթին պարզվում է, որ Ջաբարյան իշխանապետությունում հոգևոր և աշխարհիկ իշխանությունների սահմանները միշտ չէ, որ համընկնում էին: Դա խոսում է այն փաստից, որ Վահրամյանների իշխանության հոգևոր կենտրոնը գտնվում էր նոր բերդի Կյուրիկյաններին պատկանող նոր Վարազ վանքում:

Ինչ վերաբերում է «հասանք (?) շամքիներին (?)» Կայտուրուկից (?) Գանձա[կ]» հատվածին, ապա այն պետք է ընկալվեր «հասանք շամքորցիներին, Կետարակից (Գետարակ, Գետարեկ) Գանձա[կ]» և հասկանալի կլիներ, որ խոսքը շամքորցիների և Գետարակի (Գետարեկ) մասին է: Դրանով իսկ զգալիորեն կորոշվեին Իվանե աթաբեկի տիրույթների սահմանները, որոնք դեռևս ճշտված չեն:

Հեղինակը միանգամայն իրավացի է քննվող արձանագրությունը թվագրելով 1195—1199-դ: Սակայն արձանագրությունը տալիս է այդ թվագրումը հաստատող ևս մի կովան: Դա արձանագրության «հասանք (?) շամքիներին (?)» [շամքորցիներին], Կայտուրուկից (?) [Գետարակից] Գանձա[կ]» հատվածն է: Շամքորցիների և Գանձա[կ] հիշատակմամբ Իվանեն, անկասկած, նկատի է ունեցել 1195 թ. հունիսի 1-ին (որոշ տվյալներով 1198 թ.) Շամքորի խակատամարտում իղյոր հետ միասին Գանձակի աթաբեկ Աբու Բաբրին ջախջախելը: Ինչ վերաբերում է Շամքորին, ապա այն գրավվեց 1216/17 թ.՝ Վահրամ Գաղեցու կողմից:

Անդրադառնալով Կոշի արձանագրություններից մեկի թվագրմանը, հեղինակը գրում է, թե այն «վիճաբար էլ Ջաբարիայի մահից հետո և Իվանեի աթաբեկ դառնալուց առաջ» (էջ 111):

Մեզ թվում է, թե վստահորեն պետք է հաշվի առնվեն «Խաղաղիկների պատմականն ու ներքողյանը» երկի տեղեկությունը, ըստ որի Իվանեն աթարեկ է դարձել 1212/13 թ.։ Աշխատության «Ներածության» մեջ (էջ 11—12) բերվում է 1310 թ. մի ձեռագրի հիշատակարան։ Համաձայն հիշատակագրի վկայության, ոմն Պետրեկադան գրել է Աղվանքի պատմությանը Վերաբերող մի երկ, որն այնուհետև ինչ-որ հայտնագործել է հայերենի, հեղինակությունը վերագրելով իրեն։ Տեղին կլինեն, եթե հեղինակը ժանոթագրությամբ անդրադառնար այս հիշատակարանի քննությանը, որովհետև եթե նրանում պարունակված տվյալները ճիշտ են, ապա գործ ունենք մի ինչ-որ անհայտ վրացերեն երկի և նրա հայերեն թարգմանության հետ։

Գերազանցելի կլինեն, եթե արձանագրությունների հայերեն թարգմանությունները տողա-տ-

վերն ըստ վրացերեն բնագրի և հայերենից անմիջապես հետո անխտիր տրվեն բոլորի ուսերեն թարգմանությունները։

Պ. Մուրադյանի գրախոսվող գիրքն ունի համապատասխան քարտեզ, ուսերեն ընդարձակ ամփոփում, արձանագրությունների ժամանակագրական, տեղագրական և բնութագրական տախտակ, անձնանունների և տեղանունների ցանկեր։ Հրատարակչական-պոլիգրաֆիական կատարումով ևս այն օրինակելի հրատարակություն է։

Պիտի հուսայ, որ սույն աշխատությամբ ծնունդ առնող «Armeno-Georgica» մատենաշարը կգոյատևի և մոտ ապագայում կհամալրվի կովկասագիտական նոր հետազոտություններով։

Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Ա. Մ. ՔԱՄԱԼ, Քուրդստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին* (արաբերեն), Բաղդադ, 1977 թ., 412 էջ։

Քուրդ ժողովրդի պատմության կարևոր էջերից մեկին է նվիրված Իրաքի քրդական գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ արաբերեն լույս տեսած, իրաքի քուրդ պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր Ահմեդ Մոզհար Քամալի «Քուրդստանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» ստվարածավալ աշխատությունը։ Այն քրդերենից արաբերեն է թարգմանել նույն ակադեմիայի թղթակից անդամ Մուհամեդ էլ-Մուլլա Արդալ-Քարիմը։ Օգտվելով առիթից, Ա. Մ. Քամալը վերանայել է աշխատությունը, կատարել մի շարք լրացումներ։ Գիրքը բաղկացած է թարգմանչի և քրդերեն ու ներկա հրատարակությունների համար հեղինակի գրած առաջաբաններից, վեց գլուխներից և վերջաբանից։

Ա. Մ. Քամալի այս մենագրությունը առաջին փորձն է քուրդ ժողովրդի պատմության նշված ժամանակահատվածի ուսումնասիրման ասպարեզում։ Նրա վեց գլուխներում, որոնց շարադրանքի համար օգտագործված են ուսումնական, սովետական, եվրոպացի և արևելյան հետազոտողների ուսումնասիրությունները, քննության են անվում իրար հետ սերտորեն կապված մի խումբ հարցեր։ Ընթերցողը պատկերացում է կազմում XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին քուրդ ժողովրդի սոցիալ-

քաղաքական վիճակի մասին ընդհանրապես և առաջին համաշխարհային պատերազմում նրա այս կամ այն չափով ներգրավվելու մասին մասնավորապես։

Աշխատության առաջին գլխում հեղինակը ցույց է տալիս պատերազմի պատճառները, Անգլիայի, Գերմանիայի, Ռուսաստանի և մասամբ Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի հետաքրքրությունները Քուրդստանով։ Մինչև պատերազմը, տարբեր ժամանակներում, այստեղ մանապարհորդել են վերը նշված երկրների քաղաքական, ուղղմական գործիչներ, որոնք ոչ միայն ուսումնասիրել են Քուրդստանի բնական հարստությունները, ծանոթացել նրա աշխարհագրական դիրքին, այլև գրել նրա բնակիչների մասին։

Ա. Քամալը գտնում է, որ այդ մանապարհորդություններն ունեցել են շահագիտական նկատառումներ, միաժամանակ նշելով, թե Քուրդստանի վերաբերյալ եվրոպացի մանապարհորդների հաղորդումները, առանձին գործերը, որոնք հրատարակվել են տարբեր երկրներում, արժեքավոր նյութ են պարունակում քուրդ ժողովրդի նոր դարերի պատմության զանազան պրոբլեմների հետազոտության համար։ Այդ հեղինակներից են Կ. Թիլը, Հ. Ռավիյուսոնը, Հ. Մոբիերը, Մեջր Սոնը, Լ. Ավերյանովը, Վ. Մինորսկին, Պ. Լերիսը և ուրիշներ։

كمال أحمد مظير، كردستان في سنوات الحرب العالمية الأولى،
بغداد، ۱۹۷۷، ۴۱۲ صفحة.